Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանը հայտարարում է Երևան քաղաքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության լրացուցիչ մրցույթ՝ հետևյալ ավտոբուսային (միկրոավտոբուսային) երթուղիների համար.

NN ը/կ	Մրցույթի անցկացման ամսաթիվը	Երթուղու			
		համարը	անվանումը (սկիզբ - վերջ)	տեսակը (ավտոբուսային/ միկրոավտոբուսային)	սպասարկման համար պահանջվող ավտոբուսների թիվը
1	21.08.2012	76	ՀԱԹ - ՍԵՎԱՆԻ ՓՈՂՈՑ	միկրոավտոբուսային	25
		73	ԷՐԵԲՈՒՆՈՒ ԶԱՆԳՎԱԾ - ՆՈՐ ՆՈՐՔԻ 9-ՐԴ ԶԱՆԳՎԱԾ	միկրոավտոբուսային	22
		52	ՆԱԶԱՐԲԵԿՅԱՆ ԹԱՂԱՄԱՍ - «ԷՐԵԲՈՒՆԻ» ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆ	միկրոավտոբուսային	18
		67	ՆԵՐՔԻՆ ՉԱՐԲԱԽ - ՀԱԹ - Գ. ՓԱՐԱՔԱՐ	միկրոավտոբուսային	22
		64	ՆՈՐԱՇԵՆ ԹԱՂԱՄԱՍ - ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ	միկրոավտոբուսային	16
		35	ԴԱՎԹԱՇԵՆԻ 4-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ - ՀԱԹ	միկրոավտոբուսային	20
		55	ՀԱՅ ԲԵԼՈՌՈՒՍԱԿԱՆ Ա/Կ - ՆՈՐԱՇԵՆ ԹԱՂԱՄԱՍ	ավտոբուսային	10

Ց Ա Ն Կ

ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Հայտ.
2. Ընդհանուր օգտագործման ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների կազմակերպման լիցենզիա.
3. Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայական.
4. Ավտոբուսների տեխնիկական անձնագրեր (գրանցման վկայագրեր).
5. Ավտոբուսներին ամրակցված վարորդների՝ վարորդական իրավունքի վկայականներ, աշխատանքային փորձը հավաստող փաստաթղթեր.
6. Ավտոբուսի վարձակալման դեպքում՝ վարձակալության պայմանագիր.
7. Ավտոբուսն այլ տեսակի վառելիքով շահագործելու համար վերասարքավորելու (կահավորելու) դեպքում՝ շահագործման և վերասարքավորման օրինականությունը հաստատող փաստաթուղթ.
8. Ավտոբուսի վարորդի՝ սեղմված բնական կամ հեղուկ գազով աշխատելու դեպքում՝ օրինականությունը հաստատող փաստաթուղթ.
9. Ավտոբուսների նախաուղերթային տեխնիկական զննման և բուժզննման աշխատանքների իրականացման հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերը.
10. Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ շարժական կազմի հավաքակայանի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայական.

11. Փակ ծրարով ներկայացնում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևորի փոխադրման գինը.

Նշված փաստաթղթերի պատճենները ներկայացվում են մեկ օրինակից, կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից սոսնձված, կնքված և ստորագրված, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կնիք չունենալու դեպքում՝ սոսնձված և իր կողմից ստորագրված փաթեթով: Փաթեթի փաստաթղթերը պետք է նույնպես կնքված լինեն հայտատու կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից «Իսկականի հետ ճիշտ է» գրառմամբ և ստորագրությամբ, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կնիք չունենալու դեպքում՝ «Իսկականի հետ ճիշտ է» գրառմամբ և ստորագրությամբ, ինչով հավաստվում է դրանց իսկությունը:

- Մրցույթն անց է կացվելու ժամը 10^{00}-ին, Լենինգրադյան 16 հասցեում.
- Մրցույթի մասնակցության հայտերն ընդունվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարությունում (հասցեն՝ Արգիշտիի 1).
- Հայտերի և փաստաթղթերի ընդունումը դադարեցվում է մրցույթի անցկացման օրվանից 5 աշխատանքային օր առաջ (13.08.2012թ.՝ ժամը 18^{00}-ին).
- Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 514198 հեռախոսահամարով:

Մրցույթներն անցկացվում են ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշման պահանջների համաձայն:

Մրցութային հանձնաժողովի նախագահ **Հ. Նավասարդյան**